

մէջ թիւրք դպրոց բացուի, ու յետոյ երախան ալ աստիճան առ աստիճան՝ բոլորովին թիւրք լեզուով սովորէ, ենթադրենք թէ ապագային այդ երախան մարդ կը դառնայ, եթէ նորա-միտ է, կատարելութիւն կ'ստանայ. բայց այս դրութեան մէջ՝ իր թանկագին կեանքէն շատ տարիներ պիտի կորսնցնէ, այդ ձևով ուսանելով:

Եթէ այս Քիւրդը իր լեզուով զանազան գիտութիւններու և ուսման գիրքեր գտնէ, դասաւանդութիւնը քիւրդերէն կը կը լինի. եթէ դպրոց չարունակէ, աւելի շուտ կը վերջացնէ. իր ուսումը կատարեալ կը լինի, և Օսմանեան ընտանիքին աւելի թանկագին անդամ մը կը դառնայ:

Ասոր համար կը յանձնարարեմ իմ քիւրդ հայրենակիցնե-րուն՝ որ ամեն բանէ առաջ անհրաժեշտ նկատեն ձեռք բերել կազմակերպուած լաւ լեզու մը, ու անոր տէրը դառնան:

Ասկէ յետոյ ձեռնարկեն Քիւրդ ցեղի պատմութիւնն գրե-լուն, ու յետոյ որքան գրի չառնուած անդեկութիւններ ու աւանդութիւններ կան, բոլորը հաւաքեն ու գրի առնեն:

Լեզուի այս կազմակերպութեամբ կը բացուի մեր յառաջ-դիմութեան ճանապարհը: Վերջապէս, ազգի փրկութեան ա-ռաջին հիմքը ուսումն է. ուսման բանալին լեզուն է, քաղա-քակրթութեան դուռը այս բանալիով պիտի բացուի:

Մեր ցեղի կարողներու ուշադրութեանը կը յանձնարարեմ այս անհրաժեշտօրէն կարեւոր կէտը. և որոնցմէ կը խնդրեմ անմիջապէս նախաձեռնութեան դիմել»:

Ինչպէս տեսանք, Քիւրդ ցեղը այժմ կը մտածէ այն ամեն միջոցներու մասին, որ անհրաժեշտ են ազգ եւ հայրենիք կազ-մելու համար:

Պոլսի Քիւրդ գլխավոր ունեցաւ իր ճիւղերը այն ամեն չըջաններու մէջ՝ ուր հոծ թուով քիւրդեր կը գտնուին:

Ահա իրենց գործունէութեան վերջին ծրագիրը:

Բայց մենք կ'աւելցնենք՝ որ անհրաժեշտօրէն անոնց նոր կեանքին մէջ մեծ դեր պիտի ունենայ Օսմ. Սահմանադրութիւնը: